ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 3-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Իրաքի թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանը:

Հուլիսի 5-ին, կիրակի.- Ե կիրակի զկնի Հոգեգալստեան: Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնին:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ա. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Անուշավան աբեղա Ժամկոչյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ «Մայր և կոյս աղախին Քրիստոսի. որ բարեխօսդ ես միշտ աշխարհի. Քեզ երանեն ամենայն ազգինք» (Շարական) քնաբանով:

Հուլիսի 6-ին, երկուշաբթի. - Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Վրաստանի խորհրդարանական պատվիրակությունը՝ խորհրդարանի փոխնախագահ Վախթանգ Կոլբայայի գլխավորությամբ:

Վեհարանում հյուրերին ընդունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Հանդիպման ընթացքում խոսվեց երկու Եկեղեցիների և ժողովուրդների բարեկամության և Կովկասում քրիստոնեության ամրապնդման հարցերի շուրջ: Վերջինիս առիթով եղավ առաջարկություն Հայաստանում Հայ Առաքելական և Վրաստանում ու Օսեթիայում Վրաց Օրթոդոքս Եկեղեցիների կողմից համատեղ մի խորհուրդ ստեղծելու մասին:

Հուլիսի 12-ին, կիրակի.- Զ կիրակի Հոգեգալստեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշեն աբեղա Սանոսյանը: Պատարագին ներկա էր պատվիրակություն Ավետարանչական Ընկերակցությունից: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Քարոզի ընթացքում Սրբազան Հայրը հյուրերին շնորհավորեց Ավետարանչական Ընկերակցության հիմնադրման 80-ամյակի առթիվ:

Հուլիսի 15-ին, չորեքշաբթի.- Գ օր Վարդավառի պահոց:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Կանադայի թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը՝ մի խումբ կանադահայ ուսանողների հետ, որոնք կմասնակցեն Խոր Վիրապի եկեղեցում տարվող վերանորոգման աշխատանքներին:

Հուլիսի 17-ին, ուրբաթ.- Ե օր Վարդավառի պահոց:

Այսօր Մայր Աթոռի Վեհարանում կայացավ եպիսկոպոսաց ժողով:

Հուլիսի 19-ին, կիրակի.- Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Սրբազանը՝ «Քրիստոս Աստուած մեր շնորհեա մեզ ընդ Պետրոսի և ընդ որդւոցն Զեբեդեայ. արժանաւորիլ քում աստուածային տեսլեանդ» (Ծարական) բնաբանով (տե՛ս էջ 16):

Հուլիսի 20-ին, երկուշաբթի.- Բ օր Վարդավառի: Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Սուրբ Պատարագ մատուցեց Տ. Հովսեփ քահանա Ալեքսանյանը:

Հավարտ Սուրբ Պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ վասն համորեն ննջեցելոց:

Հուլիսի 21-ին Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ցուցասրահում բացվեց Էջմիածնի 11 նկարիչների աշխատանքների ցուցահանդես-վաճառք: Բացման հանդիսավոր արարողությանը նախագահում էր Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Ներկա էին նաև Ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը, Մայր Աթոռի միաբաններ, Էջմիածնի քաղաքապետ Երվանդ Աղվանյանը: Ցուցահանդես-վաճառքը տեղի կունենա հուլիսի 21-31-ը:

Հուլիսի 24-ին, ուրբաթ.- Պահք:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Բեռլինի և Հյուսիսային Գերմանիայի հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը:

Հուլիսի 26-ին, կիրակի.- Բ կիրակի զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Սուրբ Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «...եկն Որդի Մարդոյ կեցուցանել զկորուսեալսն» (Մատթ. ԺԸ 11) բնաբանով օրվա խորհրդին պատշաճող քարոզ խոսեց (տե՛ս էջ 22):

Հուլիսի 29-ին, չորեքշաբթի.- Պահք:

Եգիպտոսի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանի նախաձեռնությամբ, այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին մի խումբ եգիպտահայ երեխաներ Ալեքսանդրիայից և Կահիրեից: Մանուկները երկշաբաթյա այցելությամբ կլինեն Հայաստանի տարբեր ուխտավայրերում: